ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ__44__-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածների հետևյալ հավելվածները՝

ա. «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության բաժնի ավագ հրահանգիչ՝ հոգեբան (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-1)»,

բ. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի հրշեջ-փրկարարական և ինժեներական ջոկատի «Ա» խմբի սակրավոր (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Կ-19)»,

գ. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի թիվ 115 Տաուշի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական ջոկատի թիվ 115/2 Չինարիի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական խմբի ավագ հրաձիգ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Կ-76)»,

դ. «Ներքին գործերի նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի փրկարարական ֆակուլտետի վարորդ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-ԳՀ-ՈՒ-Կ-3)».

2) Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ նոր հավելվածներով՝

ա. «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության բաժնի ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-9)»,

բ. «Փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության Իջևանի հրշեջ-փրկարարական ջոկատի 1-ին օղակի հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.19-Կ-133)»,

գ. «Փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության Իջևանի հրշեջ-փրկարարական ջոկատի 1-ին օղակի հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.19-Կ-134)»,

դ. «Փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության Իջևանի հրշեջ-փրկարարական ջոկատի 1-ին օղակի հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.19-Կ-135)»:

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 19.04.2024թ,

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2024 թ. մայիսի 19 N 44-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը.
Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-9).

1.2. Ենթակա և հաշվետու է.
Բաժնի ավագ հրահանգիչը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները.
Բաժնի ավագ հրահանգիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները.
Բաժնի ավագ հրահանգչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի հրահանգիչ՝ հոգեբաններից որևէ մեկը վերադասի որոշմամբ:

1.5. Աշխատավայրը՝
Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8:

2.Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.

Գործառույթները՝

1. արտակարգ իրավիճակների բնագավառում հոգեբանական ծառայության կազմակերպումն ու մատուցումը.
2. ահազանգողներին հոգեբանական խորհրդատվության և աջակցության ցուցաբերումը.
3. ՆԳՆ ՓԾ ընդունվելու դիմած քաղաքացիների և փրկարարների հոգեբանական առանձնահատկությունների հետազոտումը.
4. ՆԳՆ ՓԾ աշխատակիցների հոգեբանական վերականգնմանն ուղղված գործընթացների իրականացումը:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- Ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իրականացնել ահազանգերի՝ սահմանված կարգով սպասարկումը, հոգեբանական խորհրդատվության իրականացումը՝ «911» հեռախոսահամարով ու «թեժ գծերով», ինչպես նաև արտակարգ դեպքի, պատահարի վայրում հոգեբանական աջակցության ցուցաբերման աշխատանքները.
- իրականացնել յուրաքանչյուր ահազանգողին վերաբերող տվյալների ու տեղեկատվության գրանցման աշխատանքները, ապահովել դրանց գաղտնիությունը.
- կիրառել մասնագիտական գիտելիքներ, կարողություններ հոգեբանական խորհրդատվության կարիք ունեցող մարդկանց հոգեվիճակը

բարելավելու, կայունացնելու, հանդարտեցնելու, անցանկալի քայլերից, արարքներից զերծ պահելու, կանխելու ուղղությամբ.

- արտակարգ դեպքի, պատահարի, արտակարգ իրավիճակի վայրում իրականացնել հոգեբանական օգնության կարիք ունեցող մարդկանց հաշվառումը, դասակարգումը և աջակցության ցուցաբերումը՝ օգտագործելով մասնագիտացված տրանսպորտային միջոցները, տեղի հնարավորությունները, գույքն ու այլ միջոցները.
- իրականացնել հոգեբանական աջակցություն և խորհրդատվության ցուցաբերում՝ Նախարարության լիազոր ստորաբաժանման տարածքում.
- մասնակցել թեստերի, հարցաշարերի ու այլ ձևայնացված փաստաթղթերի մշակման աշխատանքներին՝ ՆԳՆ ՓԾ ընդունվելու դիմած քաղաքացիների, փրկարարական ծառայողների հոգեբանական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով.
- սահմանված պարբերականությամբ իրականացնել ՆԳՆ ՓԾ ընդունվելու դիմած քաղաքացիների, փրկարարական ծառայողների անհատական և խմբային թեստավորման և հարցազրույցների անցկացման աշխատանքները՝ կիրառելով նաև համապատասխան դիագնոստիկ սարքավորումներ.
- իրականացնել քաղաքացիներին և փրկարարական ծառայողներին տրված բնութագրերի ու եզրակացությունների, սարքավորումների արձանագրած տվյալների ու ցուցանիշների վերլուծությունը, դրանց հիման վրա ստեղծել շտեմարաններ.
- իրականացնել Ծառայության ստորաբաժանումների անձնակազմի դիագնոստիկ և վերականգնողական աշխատանքների պլան-ժամանակացույցի կազմումը.
- մասնակցել փրկարարների մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում առկա կամ առաջացող հոգեբանական արտաքին կամ ներքին խոցող գործոնների հետազոտմանը և բացահայտմանը, ծանրաբեռնվածությանը, դրանց դասակարգմանը, ներկայացնել առաջարկություններ՝ այդ գործոնների ազդեցությունը նվազեցնելու կամ մեղմացնելու ուղղությամբ.
- առաջարկություններ ներկայացնել արտակարգ իրավիճակների բնագավառում հոգեբանական ծառայության ամրապնդման և զարգացման ուղղությամբ.
- ներկայացնել հաշվետվություններ, ուսումնասիրման և հետազոտությունների եզրահանգումներ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնել հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին.
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը.

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները.

- Իր լիազորությունների հետ կապված ՀՀ Սահմանադրության, «Փրկարար ծառայության մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին», **«Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին»**, «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին», «Պ**աշտպանության մասին»** ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- ռուսերեն (ազատ) կամ անգլերեն (կարդում և կարող է բացատրվել), կամ ֆրանսերեն (կարդում և կարող է բացատրվել), կամ գերմաներեն (կարդում և կարող է բացատրվել) լեզուների իմացություն.
- հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ և կարողություններ.
- տրամաբանելու, արագ կողմնորոշվելու ունակություն:

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը.

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ.

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը.

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը.

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները.

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը.

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը.

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը.

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխգնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է ներքին գործերի նախարարի
2024թ. ապրիլի 19 -ի N 44-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ 1-ԻՆ ՕՂԱԿԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Տավուշի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Իջևանի հրշեջ փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Ջոկատ) 1-ին օղակի հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.19-Կ-133).

1.2. Ենթակա և հաշվետու է

Հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա և հաշվետու է օղակի հրամանատարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Հրշեջ- փրկարարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի ավագ հրշեջ-փրկարարը.

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, Տավուշի մարզ, քաղ.Իջևան, Վասիլյան 4:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. հրշեջ-փրկարարը կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև ջոկատի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. հրշեջ- փրկարարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է՝

ա. իր պարտականությունների և իր առջև դրված խնդիրների կատարման համար,

բ. կցված տեխնիկայի, սարքավորումների, հրշեջ-տեխնիկական հագեցվածության ու հանդերձանքի վիճակի համար

3. հրշեջ- փրկարարի գործառույթները սահմանվում են Օրենքով, Փրկարարական ծառայության կանոնագրքով, Վարչության կանոնադրությամբ, սույն գործառույթային պարտականություններով և իրավական այլ ակտերով:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- գիտենալ ջոկատի սպասարկման տարածքը, հրդեհավտանգ և կարևորագույն օբյեկտների, ջրաղբյուրների վայրերը, ինչպես նաև ջոկատում գոյություն ունեցող հրշեջ ավտոմեքենաների և մյուս հրշեջ տեխնիկայի տակտիկատեխնիկական հնարավորությունները.
- բարեխղճորեն ուսանել հրշեջ-փրկարարական գործը, մշտապես կատարելագործել մասնագիտական գիտելիքները, հրշեջ-տեխնիկական սարքավորումների հետ աշխատելու ունակությունները.
- գիտենալ և բարեխղճորեն կատարել կանոնագրքերի, հրահանգների ու անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները.
- լինել կարգապահ.
- պահպանել պետական ունեցվածքն ու հակահրդեհային կենսակարգը, մաքուր և պատրաստ վիճակում պահել հրշեջ-տեխնիկական սարքավորումներն ու հանդերձանքը.
- պահակակետում հրդեհի (վթարի, տարերային աղետի) վայրում հստակորեն կատարել իր ծառայողական խնդիրները՝ ցուցաբերելով նախաձեռնություն.
- օգնել օղակի հրամանատարին՝ նոր ընդունված հրշեջների ուսուցանման գործում.
- իմանալ և կարողանալ կատարել հրշեջ ավտոմեքենայի ծառայողական մարտական հաշվարկի բոլոր համարների պարտականությունները.
- օղակի հրամանատարի բացակայության դեպքում կատարել նրա պարտականությունները.
- կատարել իր գործառութային պարտականություններով սահմանված խնդիրները:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Որոշումների կայացում
2. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում

4. Կազմակերպման շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս շփվում է ընթացիկ գործունեության շրջանակներում: Տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության սերժանտի կոչում:

Հավելված
հաստատված է ներքին գործերի նախարարի
2024թ.ապրիլի 19-Ի N 44-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ 1-ԻՆ ՕՂԱԿԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Տավուշի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Իջևանի հրշեջ փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Ջոկատ) 1-ին օղակի հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.19-Կ-134).

1.2. Ենթակա և հաշվետու է

Հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա և հաշվետու է օղակի հրամանատարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Հրշեջ- փրկարարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի ավագ հրշեջ-փրկարարը.

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, Տավուշի մարզ, քաղ.Իջևան, Վասիլյան 4:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. հրշեջ-փրկարարը կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև ջոկատի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. հրշեջ- փրկարարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է՝

ա. իր պարտականությունների և իր առջև դրված խնդիրների կատարման համար,

բ. կցված տեխնիկայի, սարքավորումների, հրշեջ-տեխնիկական հագեցվածության ու հանդերձանքի վիճակի համար

3. հրշեջ- փրկարարի գործառույթները սահմանվում են Օրենքով, Փրկարարական ծառայության կանոնագրքով, Վարչության կանոնադրությամբ, սույն գործառույթային պարտականություններով և իրավական այլ ակտերով:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- գիտենալ ջոկատի սպասարկման տարածքը, հրդեհավտանգ և կարևորագույն օբյեկտների, ջրաղբյուրների վայրերը, ինչպես նաև ջոկատում գոյություն ունեցող հրշեջ ավտոմեքենաների և մյուս հրշեջ տեխնիկայի տակտիկատեխնիկական հնարավորությունները.
- բարեխղճորեն ուսանել հրշեջ-փրկարարական գործը, մշտապես կատարելագործել մասնագիտական գիտելիքները, հրշեջ-տեխնիկական սարքավորումների հետ աշխատելու ունակությունները.
- գիտենալ և բարեխղճորեն կատարել կանոնագրքերի, հրահանգների ու անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները.
- լինել կարգապահ.
- պահպանել պետական ունեցվածքն ու հակահրդեհային կենսակարգը, մաքուր և պատրաստ վիճակում պահել հրշեջ-տեխնիկական սարքավորումներն ու հանդերձանքը.
- պահակակետում հրդեհի (վթարի, տարերային աղետի) վայրում հստակորեն կատարել իր ծառայողական խնդիրները՝ ցուցաբերելով նախաձեռնություն.
- օգնել օղակի հրամանատարին՝ նոր ընդունված հրշեջների ուսուցանման գործում.
- իմանալ և կարողանալ կատարել հրշեջ ավտոմեքենայի ծառայողական մարտական հաշվարկի բոլոր համարների պարտականությունները.
- օղակի հրամանատարի բացակայության դեպքում կատարել նրա պարտականությունները.
- կատարել իր գործառութային պարտականություններով սահմանված խնդիրները:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Որոշումների կայացում
2. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում

4. Կազմակերպման շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս շփվում է ընթացիկ գործունեության շրջանակներում: Տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության սերժանտի կոչում:

Հավելված
հաստատված է ներքին գործերի նախարարի
2024թ. ապրիլի 19-Ի N 44-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՋԵՎԱՆԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ 1-ԻՆ ՕՂԱԿԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Տավուշի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Իջևանի հրշեջ փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Ջոկատ) 1-ին օղակի հրշեջ-փրկարար (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.19-Կ-135).

1.2. Ենթակա և հաշվետու է

Հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա և հաշվետու է օղակի հրամանատարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Հրշեջ-փրկարարը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Հրշեջ- փրկարարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի ավագ հրշեջ-փրկարարը.

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, Տավուշի մարզ, քաղ.Իջևան, Վասիլյան 4:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. հրշեջ-փրկարարը կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև ջոկատի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

2. հրշեջ- փրկարարը խաղաղ և պատերազմի ժամանակ պատասխանատու է՝

ա. իր պարտականությունների և իր առջև դրված խնդիրների կատարման համար,

բ. կցված տեխնիկայի, սարքավորումների, հրշեջ-տեխնիկական հագեցվածության ու հանդերձանքի վիճակի համար

3. հրշեջ- փրկարարի գործառույթները սահմանվում են Օրենքով, Փրկարարական ծառայության կանոնագրքով, Վարչության կանոնադրությամբ, սույն գործառույթային պարտականություններով և իրավական այլ ակտերով:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- գիտենալ ջոկատի սպասարկման տարածքը, հրդեհավտանգ և կարևորագույն օբյեկտների, ջրաղբյուրների վայրերը, ինչպես նաև ջոկատում գոյություն ունեցող հրշեջ ավտոմեքենաների և մյուս հրշեջ տեխնիկայի տակտիկատեխնիկական հնարավորությունները.
- բարեխղճորեն ուսանել հրշեջ-փրկարարական գործը, մշտապես կատարելագործել մասնագիտական գիտելիքները, հրշեջ-տեխնիկական սարքավորումների հետ աշխատելու ունակությունները.
- գիտենալ և բարեխղճորեն կատարել կանոնագրքերի, հրահանգների ու անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները.
- լինել կարգապահ.
- պահպանել պետական ունեցվածքն ու հակահրդեհային կենսակարգը, մաքուր և պատրաստ վիճակում պահել հրշեջ-տեխնիկական սարքավորումներն ու հանդերձանքը.
- պահակակետում հրդեհի (վթարի, տարերային աղետի) վայրում հստակորեն կատարել իր ծառայողական խնդիրները՝ ցուցաբերելով նախաձեռնություն.
- օգնել օղակի հրամանատարին՝ նոր ընդունված հրշեջների ուսուցանման գործում.
- իմանալ և կարողանալ կատարել հրշեջ ավտոմեքենայի ծառայողական մարտական հաշվարկի բոլոր համարների պարտականությունները.
- օղակի հրամանատարի բացակայության դեպքում կատարել նրա պարտականությունները.
- կատարել իր գործառութային պարտականություններով սահմանված խնդիրները:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Որոշումների կայացում
2. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Ժամանակի կառավարում

4. Կազմակերպման շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս շփվում է ընթացիկ գործունեության շրջանակներում: Տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության սերժանտի կոչում: